ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

ՀՀ Արմավիրի մարզ
Արազափ համայնք
04403613
թիվ 132
«10» 10 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 07-ին կայացած թիվ 7 հերթական նիստի որոշումները:

Առդիր՝ 12 թերթ:

ԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / [signature] / Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

9597-11
11 10 2011

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
## ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

*2011թվականի նոյեմբերի «07»* *N 1*

### ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով.*

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

*1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 07- ի թիվ 7 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ

Առաքելյան Վաղարշակ

Բարոյան Ֆարամարդ

Գրիգորյան Գորիկ

Գևորգյան Կառլեն

Գրիգորյան Թևոս

Եղիազարյան Գագիկ

ԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / / Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.Տ.

**2011թվականի նոյեմբերի «07»**
**գ. Արազափ**

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի
N 1 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 07 - Ի ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2012ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ

*2011թվականի հոկտեմբերի « 07»* — *N 2-Ն*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16–րդ հոդվածի 3-րդ կետով, 63-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի առաջին կետի 3-րդ ենթակետի հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի, 17.06.2011թվականի թիվ 01/03.2/1859-11 գրությունը և անասնաբուժական բնագավառում համայնքի ղեկավարին լիազորությունների պատվիրակման 01.07.2011թվականի թիվ ԱԱՎ 1507 պայմանագիրը, 19.08.2010թվականի թիվ 01/03.2/2505-11 գրությունը.*

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

*1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի ավագանու կողմից 2010թվականի դեկտեմբերի 6-ի հաստատված «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի 2011 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը՝*

*1.1Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները ավելացնել 300,0հազ. դրամով*
*04.2.1 բաժին խումբ դասի 4241 հոդվածին ավելացնել 300,0հազ.դրամ*
*05.1.1 բաժին խումբ դասի 4111 հոդվածից պակասեցնել 280,0հազ. դրամ*
*01.1.1 բաժին խումբ դասի 4214 հոդվածին ավելացնել 55,0հազ.դրամ ինտերնետ կապ ձեռք բերելու համար, նույն բաժին խումբ դասի 4264 հոդվածին ավելացնել 200,0հազ.դրամ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի ծառայողական «Հունդայի Տուքսոն» մակնիշի 777 LՈ 71 պետհամարանիշի ավտոմեքենային անվադողեր ձեռք բերելու համար, նույն բաժին խումբ դասի 4823 հոդվածին ավելացնել 25,0հազ.դրամ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի ծառայողական «Հունդայի Տուքսոն» մակնիշի 777 LՈ 71 պետհամարանիշի ավտոմեքենայի տեխնիկական զննություն անցկացնելու համար:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:*

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ

*Առաքելյան Վաղարշակ* ----------
*Բաքոյան Ֆարամարդ* ----------
*Գրիգորյան Գորիկ* ----------
*Գևորգյան Կառլեն* ----------
*Գրիգորյան Թևոս* ----------
*Եղիազարյան Գագիկ* ----------

ԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / ---------- / Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.Տ.

*2011թվականի հոկտեմբերի «07»*
*գ. Արազափ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

*2011թվականի հոկտեմբերի «07»* *N 3*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի հինգերորդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.*

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

*1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի 2011թվականի բյուջեով 10.7.1բաժին խումբ դասի 4729 հոդվածից 90,0հազ. դրամ տրամադրել գիշերօթիկ դպրոց հաճախող երեխաներ ունեցող սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ

*Առաքելյան Վաղարշակ*

*Բաքոյան Ֆարամարդ*

*Գրիգորյան Գորիկ*

*Գևորգյան Կարլեն*

*Գրիգորյան Թևոս*

*Եղիազարյան Գագիկ*

ԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / / Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.Տ.

*2011թվականի հոկտեմբերի «07»*
*գ. Արազափ*

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի
N 3 ՈՐՈՇՄԱՆ

## ՑՈՒՑԱԿ

1. *Ավետիսյան Մետաքսյա-- 30.0հազ. դրամ*
2. *Կոստանյան Արամայիս-- 30.0հազ. դրամ*
3. *Սահակյան Սուսաննա --30.0հազ. դրամ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
## ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

*2011թվականի հոկտեմբերի 07.* *թիվ 4-Ն*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջի մասի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով.*

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

*1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի տարածքում 2012թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը ՝ համաձայն հավելվածի:*

*2.Սույն որոշումն օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննություն անցնելու համար:*

*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:*

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ

| | |
|---|---|
| *Առաքելյան* | *Վաղարշակ* |
| *Բաբոյան* | *ֆարամարզ* |
| *Գրիգորյան* | *Գորիկ* |
| *Գրիգորյան* | *Թևոս* |
| *Գևորգյան* | *Կառլեն* |
| *Եղիազարյան Գագիկ* | |

ԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / / Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.Տ.

*2011թվականի հոկտեմբերի «07»*
*գ. Արազափ*

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի
N 4Ն ՈՐՈՇՄԱՆ

## ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել `հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ / հինգ հազար դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ վեց հազար /դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ յոթ հազար/ դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տաս հազար/դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար/ դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ /երկու հազար/դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ /հինգ հարյուր /դրամ.

*բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.*

*գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:*

*3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել /երկու հազար/դրամ:*

*4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝*

*1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում `յուրաքնչյուր եռամսյակի համար՝ /չորս հազար/ դրամ*

*2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ /չորս հազար / դրամ:*

*5. Համայնքի տարածքում՝*

*ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյու հիսուն դրամ.*

*բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:*

*6 Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել/ հիսուն հազար դրամ/ դրամ:*

*7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝*

*ա) առևտրի օբյեկտների համար՝ /երեսունհինգ հազար /դրամ.*

*բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000-80 000 դրամ.*

*գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 100 000-300 000 դրամ.*

*դ) խաղատների կազմակերպման համար՝ 250 000-500 000 դրամ.*

*ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000-500 000 դրամ*

*զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000-150 000 դրամ:*

*8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝*

*ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ /երկու հազար/ դրամ.*

*բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.*

*գ) այլ արտաքին գովազդի համար՝ /մեկ հազար / դրամ.*

*դ) ծխախոտի արտաքին գովազդի համար՝ /երկու հազար դրամ/ դրամ*

*ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:*

*9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել /մեկ հազար / դրամ:*

*10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել /հինգ հազար /դրամ:*

*11.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար /մեկ հազար/ դրամ:*

*12. Համայնքի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել /մեկ հազար/ դրամ:*

*13. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխվող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել /երեք հազար դրամ/:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

2010թվականի հոկտեմբերի «07». թիվ 5-Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2012ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջի մասի 19 կետով, և «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի կողմից 2012թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ

Առաքելյան Վաղարշակ

Բաքոյան ֆարամարզ

Գրիգորյան Գորիկ

Գրիգորյան Թևոս

Գևորգյան Կառլեն

Եղիազարյան Գագիկ

ԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / / Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.Տ.

2011թվականի հոկտեմբերի «07»

գ. Արազափ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ... 

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2012ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող, ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

1) Համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար՝ հինգ հազար դրամ.
2) Համայնքի բնակիչ համարվող անձանց՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ մեկ հազար դրամ.
3) Համայնքի բնակիչ համարվող անձանց՝ աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ մեկ հազար դրամ.
4) Համայնքի բնակիչ համարվող անձանց՝ նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկայի ավանդներ և փոստային առաքումներ ( այդ թվում՝ դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ մեկ հազար դրամ.
5) Համայնքի բնակիչ համարվող անձանց տեղեկանք, բնութագիր և երաշխավորագիր տալու համար՝ մեկ հազար դրամ:

2.Համայնքի տարածքում համայնքի բմնակիչ համարվող անձանց մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

1) Խմելաջրի մատակարարման համար մեկ հազար դրամ:
2) Աղբահանության համար՝ մեկ անձին՝ հիսուն դրամ:

3.Համայնքային ենթակայության մանկապարտեզում երեխաների պահպանման համար ծնողական վճար սահմանել մեկ հազար հինգ հարյուր դրամ.

1)Բնակչության առանձին խմբերի համար վճարների արտոնություններ սահմանել հետևյալ չափերով՝
ա. Մեկ ընտանիքից մանկապարտեզ հաճախող երկու և ավելի երեխաների համար՝ 75 տոկոսի չափով՝ մեկ հազար մեկ հարյուր քսանհինգ դրամ.
բ. միակողմանի ծնողազուրկ երեխաների համար՝50 տոկոսի չափով՝ յոթ հարյու հիսուն դրամ.
գ. Երկկողմանի ծնողազուրկ երեխանների համար 25 տոկոսի չափով՝ երեք հարյուր յոթանասունհինգ դրամ.
դ.Զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների, ինչպես նաև առաջին կարգի հաշմանդամների երեխաների համար՝ 100 տոկոսի չափով: